ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 28. Տուգանքը վճարելուց խուսափելը

1. Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում Պրոբացիայի ծառայությունն այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում է արձանագրություն և միջնորդություն ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու կամ տուգանքը ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ:

2. Տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու մասին դատական ակտն ստանալու դեպքում այն ենթակա է կատարման ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Եթե Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը գույք չի հայտնաբերել, կամ հայտնաբերված գույքը բավարար չէ տուգանքը վճարելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ տուգանքը վճարելու համար անհրաժեշտ է գույքի բաժանման կամ բաժնեմաս անջատելու պահանջով հայց ներկայացնել, ապա կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողի որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Պրոբացիայի ծառայությունն այդ մասին կազմում է արձանագրություն և միջնորդություն ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքը կամ դրա չվճարած մասն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ:

Հոդված 150. Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի, առարկայի բռնագրավման կիրառումը

1. Դատավճիռը կատարման հանձնելու հետ միաժամանակ դատարանը հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի, առարկայի բռնագրավման վերաբերյալ կատարողական թերթն ուղարկում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որը տրամադրում է տեղեկություն այն կատարելու կամ դրա անհնարինության մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի բռնագրավումը կատարվում է ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով: